ԲՈԼՇԵՎԻԿՅԱՆ ՊԱՐՏԻԱՆ Վ. Ի. ԼԵՆԻՆԻ ԳԼԽԱՎՈՐՈՒԹՅԱՄԲ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԿՌԻՎՆԵՐՈՒՄ ՏԱՐԱԾ ՀԱՂԹԱՆԱԿՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉ

Ղ. Տ. ԴՐԻԳՈՐՅԱՆ

Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի հաղթանակով մեր երկրում վերացվեց շահագործող դասակարգերի տնտեսական ու քաղաքական տիրապետությունը, իսկ օտարերկրյա իմպերիալիստները կորցրին Ռուսաստանում ներդրած իրենց մեծաքանակ կապիտալը, զրկվեցին Ռուսաստանից որպես հումքի հարուստ աղբյուրի և շահավետ շուկայի։

ԱՄՆ-ի, Անգլիայի, Ֆրանսիայի, Գերմանիայի, Ճապոնիայի և մյուս երկրների իմպերիալիստները սարսափում էին Հոկտեմբերյան ռևոլյուցիայի քաղաքական ազդեցությունից, նրանք վախենում էին «...չլինի թե մեր հրդեհի կայծերը թռչեն նրանց տանիքները»[1]*։ Ահա թե ինչու Հոկտեմբերյան ռևոլյուցիայի հաղթանակից անմիջապես հետո ներքին հակառևոլյուցիայի և համաշխարհային իմպերիալիզմի բոլոր ուժերը սկսեցին համատեղ արշավանք երիտասարդ Սովետական իշխանության դեմ։*

1918 թվականի գարնանը գերմանական կայզերական բանակները օկուպացրին Ֆինլանդիան, Մերձբալթյան երկրները, Բելոռուսիան, գրավեցին Դոնի-Ռոստովը և շարժվեցին դեպի Ռուսաստանի հարավը։ Նրանք օգնեցին ատաման Կրասնովին՝ Սովետական իշխանության դեմ պայքարի համար ձևավորելու հակառևոլյուցիոն բանակ, և այն շարժեցին Ցարիցինի վրա։ Գերմանիայի ռազմական պարտությունից հետո, Ռուսաստանի հարավում ամրացան Անտանտի ուժերը, մասնավորապես ֆրանսիական ինտերվենտները։ 1918 թվականի գարնանը անգլո-ֆրանսիական-ամերիկյան դեսանտային զորամասերը դուրս եկան Ռուսաստանի հյուսիսային շրջանները և սպիտակգվարդիական ուժերից ստեղծեցին այսպես կոչված «Ռուսաստանի Հյուսիսի կառավարություն»։ 1918 թվականի ապրիլին ճապոնական, իսկ մի քիչ ավելի ուշ անգլիական դեսանտային զորամասերը ափ իջան Վլադիվոստոկում։ Միջին Վոլգայի շրջանում և Արևելյան Սիբիրում 1918 թվականի մայիսի վերջերին Անտանտի իմպերիալիստները կազմակերպեցին Չեխոսլովակյան կորպուսի խռովությունը և անմիջական սպառնալիք ստեղծեցին Մոսկվայի համար։

Սպիտակգվարդիական գեներալներ Կոռնիլովը, Ալեքսեևը և Դենիկինը, օտարերկրյա իմպերիալիստների աջակցությամբ, Հյուսիսային Կովկասում

---

[1] Վ. Ի. Լենին, *Երկեր*, հ. 26, էջ 631։

ստեղծեցին հակառևոլյուցիոն «կամավորական բանակը» և Հյուսիսային Կովկասը կտրեցին Սովետական Ռուսաստանից։ Դոնի շրջանը զավթեցին ցարական գեներալներ Կրասնովի և Մամոնտովի բանդաները։ Վոլգայի շրջանում ստեղծվեց Սամարայի հակառևոլյուցիոն էսեռական կառավարությունը, իսկ Արևելյան Սիբիրում՝ Օմսկի կառավարությունը. 1918 թվականի նոյեմբերի 17—18-ին այնտեղ կատարվեց պետական հեղաշրջում և հաստատվեց Անտանտի դրածո ցարական ծովակալ Կոլչակի ռազմական դիկտատուրան։ Հյուսիս-արևմուտքում Պետրոգրադին սպառնում էին գեներալ Յուդենիչի և Ռոձենկոյի բանակները, որոնց օգնում էին սպիտակ ֆիններն։ Միջին Ասիայում անգլիական դինված ուժերը գրավեցին Թուրքեստանի որոշ շրջաններ։ Օգտվելով Սովետական Ռուսաստանի ծանր վիճակից, թուրքական-սուլթանական բանակները, կայզերական Գերմանիայի աջակցությամբ, 1918 թվականի ապրիլին ներխուժեցին Անդրկովկաս։ Նրանք գրավեցին Բաթումը և Կարսը, իսկ մայիսին՝ Ալեքսանդրոպոլը և շարժվեցին դեպի Բաքու, որտեղ դեռ 1918 թվականի ապրիլի 1-ին հաստատվել էին սովետական կարգեր, հանձին Բաքվի փառապանծ Կոմունայի։ Շուտով Բաքու են ներխուժում անգլիական ինտերվենտները։ Ներքին հակառևոլյուցիայի և օտարերկրյա իմպերիալիստների միասնական ուժերի հարվածների տակ 1918 թվականի հուլիսի 31-ին ընկավ Բաքվի Կոմունան։

1918 թվականի նոյեմբերին թուրքական զորքերը նահանջեցին Անդրկովկասից և նրանց փոխարինելու եկան անգլո-ամերիկյան ու ֆրանսիական օկուպանտները։ Անդրկովկասը արևմտյան իմպերիալիստների և ներքին հակառևոլյուցիոն ուժերի համար դարձավ ռազմական պլացդարմ Սովետական Ռուսաստանի դեմ պայքարելու համար։ Դաշնակները, մենշևիկները և մուսավաթականները՝ արևմտյան իմպերիալիստների հետ դաշնակցած, ակտիվ պայքարի էին դուրս եկել Սովետական Ռուսաստանի դեմ։ Ստ. Շահումյանը, մերկացնելով Անդրկովկասի բուրժուա-նացիոնալիստական, հակառևոլյուցիոն ուժերի հակասովետական գործունեությունը, գրել է՝ «Անդրկովկասյան իշխանությունն իր քաղաքականությամբ ոչ միայն անուղղակիորեն, այլև ուղղակի աջակցություն է ցույց տալիս Կալեդինին և բառացի իմաստով դառնակ է խրում ռևոլյուցիայի թիկունքը»[1]։

Անգլո-ամերիկյան և ֆրանսիական իմպերիալիստների կողմից Անդրկովկասի օկուպացմամբ ավարտվեց Սովետական Ռուսաստանը լիակատար շրջապատելու նրանց պլանը։ Այսպես սկսվեցին մեր երկրում ծանր, երկարատև և արյունալի ռազմական ինտերվենցիան և քաղաքացիական կռիվները։

Աշխարհում առաջին սոցիալիստական երկրի և նրա ժողովուրդների համար ստեղծված այսպիսի ծանր ու դժվարին պայմաններում էր, որ Կոմունիստական պարտիան, Վ. Ի. Լենինի գլխավորությամբ, մոբիլիզացրեց սովետական ժողովրդի և նրա նորաստեղծ Կարմիր Բանակի ուժերը թշնամու դեմ։ Սովետական ժողովուրդը ռևոլյուցիոն անձնուրացությամբ և մեծագույն սրիրագործություններով մինչև հաղթական վախճանը տարավ քաղաքացիական կռիվը, որը և ավարտվեց ներքին հակառևոլյուցիոն և օտարերկրյա ինտերվենցիոն բանակների լիակատար ջախջախմամբ։

---

[1] Ստ. Շահումյան, Հոդվածներ և ճառեր, Երևան, 1953, էջ 277 (ընդգծումը մերն է — Զ. Գ.)։

***

Քաղաքացիական կռիվների և օտարերկրյա ինտերվենցիայի տարիներին ներքին ու արտաքին հակառևոլյուցիոն ուժերի ջախջախման վճռական դերը պատկանում է երիտասարդ Կարմիր Բանակին, որը ստեղծվեց Վ. Ի. Լենինի գլխավորությամբ, Կոմունիստական պարտիայի կողմից։

Կարմիր Բանակի ստեղծման ճանապարհին կանգնած էին շատ դժվարություններ։ Նախ և առաջ չկար սոցիալիստական պետության նոր տիպի ռևոլյուցիոն բանակի փորձ, ավելին. մինչև Վ. Ի. Լենինն այդ հարցը նույնիսկ տեսականորեն չէր դրվել ու մշակվել։ Այդ մասին պարտիայի VIII համագումարում Կենտրոնական Կոմիտեի հաշվետու զեկուցման մեջ Վ. Ի. Լենինը շատ որոշակիորեն ասում է՝ «Կարմիր Բանակի կառուցման հարցը միանգամայն նոր հարց էր, այդ հարցը բոլորովին չէր դրվել անգամ տեսականորեն»[1]։

Հայտնի է, որ իր ժամանակին Կ. Մարքսը և Ֆ. Էնգելսը, ելնելով կապիտալիզմի՝ մինչիմպերիալիստական էպոխայի հատկանիշներից, հնարավոր էին համարում միաժամանակ կամ գրեթե միաժամանակ սոցիալիզմի հաղթանակը բոլոր քաղաքակրթված երկրներում կամ դրանց մեծամասնությունում։ Այդպիսի պայմաններում նրանք գտնում էին, որ անհրաժեշտ չի լինի ունենալ մշտական կանոնավոր բանակ, նրան կփոխարինեն ժողովրդական միլիցիան, ժողովրդի ընդհանուր զինումը։ Այս դրույթն իր որոշակի արտահայտությունը գտավ նաև մեր պարտիայի առաջին ծրագրում։

Կարմիր Բանակի կազմակերպման դժվարությունները կապված էին նաև մի շարք այլ հանգամանքների և մասնավորապես այն բանի հետ, որ ժողովուրդը հոգնել էր հարատև իմպերիալիստական պատերազմից, իսկ երկիրը՝ բայքայվել տնտեսապես։

Չնայած այդ դժվարություններին, Կարմիր Բանակի կազմակերպման հարցը մեծ հաջողությամբ լուծվեց և՛ տեսականորեն և՛ կազմակերպչորեն։ Վ. Ի. Լենինը հանճարեղ կերպով ցույց տվեց, որ իմպերիալիստական պատերազմների շրջապատման պայմաններում իմպերիալիստական ագրեսիային դիմադրելու և սոցիալիստական ռևոլյուցիայի հաղթանակն ապահովելու համար Կարմիր Բանակի ստեղծումը սոցիալիստական պետության համար կենսական անհրաժեշտություն է։ «Նոր հասարակական դասակարգը,— գրում է Վ. Ի. Լենինը,—դեպի տիրապետություն բարձրանալիս, երբեք չէր կարող և այժմ էլ չի կարող հասնել այդ տիրապետությանն ու ամրապնդել այն այլ կերպ... եթե ոչ աստիճանաբար, քաղաքացիական ծանր պատերազմի մեջ մշակելով նոր բանակ, նոր կարգապահություն, նոր դասակարգի նոր ռազմական կազմակերպություն»[2]։

1918 թվականի հունվարի 3 (16)-ին Համառուսաստանյան Կենտրոնական Գործադիր Կոմիտեն հաստատեց Վ. Ի. Լենինի գրած «Աշխատավոր ու շահագործվող ժողովրդի իրավունքների դեկլարացիան», որով և դեկրետագրվեց Կարմիր Բանակի ստեղծման անհրաժեշտությունը։

Հզոր Կարմիր Բանակի ստեղծման անհրաժեշտությունն այդ էտապում Վ. Ի. Լենինը կապում էր նաև այն բանի հետ, որ Սովետական երիտասարդ

---

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 29, էջ 172։

[2] Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 28, էջ 360։

ռեսպուբլիկայի դեմ իրենց մեծաքանակ ու մինչև ատամները զինված բանակներով դուրս եկան իմպերիալիստական պետությունները։ «Մինչև այժմ,— գրել է Լենինը,—մեր առաջ կանգնած էին չնչին, արգահատելի, խղճուկ թշնամիներ (համաշխարհային իմպերիալիզմի տեսակետից)՝ ինչ-որ ապուշ Ռոմանով, պարծենկոտ Կերենսկի, յունկերների և բուրժույազիների բանդան։ Այժմ մեր դեմ ելավ կուլտուրական, տեխնիկապես առաջնակարգ ձևով սարքավորված, կազմակերպորեն հիանալի կարգի բերված համաշխարհային իմպերիալիզմի հսկան։ Նրա դեմ պետք է կռվել։ Նրա դեմ պետք է կարողանալ կռվել»[1]։

Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ հեղափոխության հաղթանակի երկրորդ օրը՝ հոկտեմբերի 26-ին Ժողովրդական Կոմիսարների Սովետի կազմում ստեղծվեց «Ռազմական և ծովային գործերի կոմիտե», որը 1917 թվականի դեկտեմբերին վերանվանվեց «Ռազմական գործերի կոմիսարիատ»։ 1918 թ. հունվարի 15 (28)-ին Ժողովրդական Կոմիսարների Սովետի նախագահ Վ. Ի. Լենինը ստորագրեց Կարմիր Բանակի կազմակերպման դեկրետը։ 1918 թվականի փետրվարի 1 (14)-ին դեկրետ ընդունվեց բանվորա-գյուղացիական Կարմիր Նավատորմի ստեղծման մասին։ Հիմք դրվեց Զինվորական Կոմիսարների ինստիտուտին և բանակի քաղաքական օրգաններին, որոնք մեծ դեր խաղացին Կարմիր Բանակի կազմակերպման և նրա մարտիկների ու հրամանատարների ռազմա-քաղաքական դաստիարակության գործում։

Կարմիր Բանակի հետագա ամրապնդման գործում մեծագույն դեր խաղաց պարտիայի VIII համագումարը (1919 թ. մարտ)։ Քննարկելով ռազմական շինարարության ավելի քան մեկ տարվա արդյունքները, համագումարը ջախջախիչ հարված տվեց «զինվորական օպոզիցիային», որը խանգարում էր ամուր, կարգապահ և հզոր կանոնավոր բանակի ստեղծմանը։

Վ. Ի. Լենինի առաջարկած նախագծով համագումարը ընդունեց բանաձև, որը պահանջեց բանակում անհապաղ վերջ տալ պարտիզանականության տարրերին, քաղաքական աշխատանքի նշանակության թերագնահատմանը, ստեղծել ամուր, մարտունակ, դասակարգային բարձր գիտակցության հասած կանոնավոր բանակ։ Համագումարը ռազմական շինարարության հարցին տալով կարևոր նշանակություն՝ լենինյան այդ սկզբունքը արտացոլեց նաև մեր պարտիայի նոր ծրագրում, որը և դարձավ Սովետական պետության և Կոմունիստական պարտիայի ռազմական քաղաքականության հիմքը։

Կոմունիստական պարտիան Վ. Ի. Լենինի գլխավորությամբ մեծ դեր խաղաց Կարմիր Բանակի հրամանատարական կադրերի պատրաստման ու առաջքաշման գործում։ Վ. Ի. Լենինը մեծագույն նշանակություն տալով Կարմիր Բանակի համար նոր տիպի հրամանատարական կադրերի պատրաստման գործին, 1918 թվականի նոյեմբերի 24-ին «Կարմիր սպայի օրը» արտասանած ճառում ասում է՝ «...հին հրամանատարական կազմը բաղկացած էր առավելապես կապիտալիստների երես տված և այլասերված դավակներից, որոնք ոչ մի ընդհանուր բան չունեին հասարակ զինվորի հետ։ Դրա համար էլ այժմ, նոր բանակ կառուցելիս, մենք պետք է հրամանատարներ վերցնենք միայն ժողովրդից։ Միայն կարմիր սպաները զինվորների մեջ հեղինակություն կունենան ու կկարողանան մեր բանակի մեջ սոցիալիզմն ամրապնդել։ Այդ-

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 27, էջ 57։

պիսի բանակն անպարտելի կլինի»[1]։ Ղեկավարվելով Վ. Ի. Լենինի այս դրույթով, պարտիան ժողովրդից առաջ քաշեց և դաստիարակեց Կարմիր Բանակի նոր տիպի այնպիսի տաղանդավոր զորավարներ ու քաղաշիտատղներ, ինչպիսիք էին՝ Մ. Ֆրունզեն, Կ. Վորոշիլովը, Ս. Բուդյոննին, Ա. Եգորովը, Վ. Բլյուխերը, Մ. Տուխաչևսկին, Ա. Մյասնիկյանը, Ի. Ապանասենկոն, Օ. Գորոդովիկովը, Գայդ (Հայկ Բժշկյան), Վ. Կիկվիձեն, Ա. Բուբնովը, Գ. Կոտովսկին, Ե. Կովտյուխը, Յա. Գամառնիկը, Ա. Պարխոմենկոն, Ի. Ուբորևիչը, Ս. Տիմոշենկոն, Յա. Ֆաբրիցիուսը, Ի. Ունշլիխտը, Վ. Չապաևը, Ն. Շչորսը, Ս. Լազոն, Ի. Յակիրը, Դ. Ֆուրմանովը, Ի. Ֆեդկոն, Պ. Պոստիշևը, Վ. Անտոնով-Օվսեենկոն, Ս. Գուսևը, Լ. Մեխլիսը, Ս. Վոստրեցովը, Վ. Ազինը, Պ. Դիբենկոն, Դ. Ժլոբը, Գ. Էյխեն և ուրիշներ։

Բոլշևիկների պարտիան Կարմիր Բանակի հետ միասին ստեղծեց նաև սովետական առաջավոր ռազմական արվեստը, որի հիմունքների մշակման ու գիտական հիմնավորման գործում նույնպես մեծ են Վ. Ի. Լենինի մատուցած ծառայությունները։ Վ. Ի. Լենինը ռազմական արվեստի ուսումնասիրման հարցերով զբաղվել է սկսած իր ռևոլյուցիոն գործունեության վաղ շրջանից[2]։ Վ. Ի. Լենինը, ուսումնասիրելով ռազմական արվեստի մասին անցյալի գրական ժառանգությունը, անցյալ ռևոլյուցիաների, ապստամբությունների ու պատերազմների պատմությունը, ռազմական արվեստի հարցերին անդրադարձել է իր մի շարք աշխատություններում։ Վ. Ի. Լենինը ինչպես իր այդ աշխատություններում, նույնպես և բազմաթիվ հոդվածներում, նամակներում, զեկուցումներում ու ելույթներում զարգացրեց ու առաջ մղեց մարքսիստական տեսությունը զինված ապստամբության, բանակի ու պատերազմների մասին։

Մ. Կալինինը իր «Լենինը Սոցիալիստական հայրենիքի պաշտպանության մասին» հոդվածում անդրադառնալով Վ. Ի. Լենինի ռազմա-տեսական հարուստ ժառանգությանը, բարձր է գնահատել այն։ Նա Լենինին համարում է ռազմական արվեստի, ստրատեգիայի և տակտիկայի խորը գիտակ[3]։

Վ. Ի. Լենինի ուսմունքը պրոլետարիատի ռևոլյուցիոն տակտիկայի մասին կարևոր նշանակություն ունեցավ Կարմիր Բանակի ակտիվ հարձակողական ստրատեգիայի մշակման գործում։ Դեռևս 1905 թվականին իր «Ժամանակավոր ռևոլյուցիոն կառավարության մասին» հոդվածում Վ. Ի. Լենինը գրել է՝ «Պրոլետարիատի պարտիայի առջև ամեն մի «լուրջ ռևոլյուցիոն կացություն» դնում է ապստամբությունը գիտակցորեն անցկացնելու, ռևոլյուցիան կազմակերպելու, բոլոր ռևոլյուցիոն ուժերը կենտրոնացնելու, համարձակ ռազմական հարձակման, ռևոլյուցիոն իշխանության ամենաեռանդուն օգտագործման խնդիրը»[4]։ Դարձյալ այդ շրջանում գրած իր «Մոսկվայի ապստամբության դասերը» հոդվածում Վ. Ի. Լենինը շատ որոշակիորեն ցույց է տալիս, որ ցարիզմի դեմ ապստամբած պրոլետարիատի հաղթանակի կարևոր պայմաններից մեկը հարձակողական ստրատեգիան է։ 1917 թվականին, երբ ռուսական պրոլետարիատը վճռական գրոհի էր նախապատրաստվում իշխանության նվաճման համար, Վ. Ի. Լենինը պարտիայից պահանջում էր անշեղորեն իրագործել Կ. Մարքսի այն դրույթը, թե ապստամբություն սկսելու

---

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 28, էջ 238—239։

[2] Տե՛ս Н. Крупская, Воспоминания о Ленине, 1932, էջ 87։

[3] Տե՛ս «Большевик», 1943, № 2, էջ 30։

[4] Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 8, էջ 614։

դեպքում «...պետք է գործել ամենամեծ վճռականությամբ և անպատճառ, անպայման անցնել հարձակման: «Պաշտպանվելը դիմված ապստամբության մահն է»»[1]: Վ. Ի. Լենինը քաղաքացիական կռիվների տարիներին Կարմիր Բանակի հրամանատարությունից պահանջում էր ռազմաճակատներում միշտ բարձր պահել բանակի հարձակողական թափը: Վ. Ի. Լենինի առաջադրած ակտիվ հարձակողական ստրատեգիան դարձավ սովետական ռազմական գիտության անկյունաքարը:

Լենինյան խորաթափանց դրույթները խոշոր դեր խաղացին նաև Կարմիր Բանակի տակտիկական սկզբունքների մշակման գործում: Վ. Ի. Լենինը հանդամանորեն ուսումնասիրելով իմպերիալիզմի ժամանակաշրջանի պատերազմների փորձը, ցույց տվեց, որ դրանք մեքենաների պատերազմներ են: Ուստի նա վճռականորեն դուրս եկավ անցյալի, հին պատերազմներին համապատասխանող քարացած ու շաբլոն ռազմական տակտիկայի դեմ: Վ. Ի. Լենինը ցույց տվեց, որ ժամանակակից պատերազմներում մեծ չափերով օգտագործվող ռազմական նոր տեխնիկան պահանջում է նոր տակտիկա, հետևապես և բանակի նոր կազմակերպական ձև և նոր մարտակարգ:

Այս տեսակետից ուշագրավ է այն փաստը, որ Վ. Ի. Լենինը 1919 թվականին՝ քաղաքացիական կռիվների ամենավճռական պահին, երբ թշնամին Կարմիր Բանակի դեմ լայնորեն օգտագործում էր իր հեծելազորը, Կարմիր Բանակի հրամանատարությունից պահանջեց փոխել մեր բանակի տակտիկան: 1919 թվականի սեպտեմբերի 4-ին ռեսպուբլիկայի Ռազմա-ռևոլյուցիոն խորհրդից Վ. Ի. Լենինը պահանջեց տեսականորեն մշակել և պրակտիկայում թշնամու հեծելազորի դեմ կռվելու համար իրազործել մեծ չափերով ավիացիայի օգտագործման հարցը[2]:

Վ. Ի. Լենինը իր ռազմական տեսության մեջ առանձնահատուկ նշանակություն էր տալիս թիկունքի, այսինքն՝ ժողովրդական մասսաների դերին և նրանց վերաբերմունքին դեպի պատերազմը: «Ինչպես հարկն է, պատերազմ մղելու համար անհրաժեշտ է կազմակերպված ամուր թիկունք»,—գրել է Վ. Ի. Լենինը[3]: Հետագայում ավելի խորացնելով ու զարգացնելով իր այդ միտքը, նա գրել է՝ «Պատերազմում հաղթում է նա, ով ավելի շատ ռեզերվներ, ավելի շատ ուժի աղբյուրներ, ավելի շատ դիմացկունություն ունի ժողովրդական դանգվածում»[4]: Թիկունքի ամրության և թշնամուն հաղթելու գործում Լենինը վճռական նշանակություն էր տալիս բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքին, մեր երկրի բազմազգ ժողովուրդների հաստատ բարեկամությանը:

Վ. Ի. Լենինի ստեղծած հարուստ ռազմական ժառանգությունը դարձավ սովետական առաջավոր ռազմական արվեստի գիտական հիմքը:

Այսպիսով, Կարմիր Բանակը Հոկտեմբերյան ռևոլյուցիայի ծնունդն է: Նա իր ստեղծմամբ ու ամրապնդմամբ ամբողջովին կապված է պարտիայի ու նրա առաջնորդ Լենինի անվան ու պրակտիկ գործունեության հետ:

---

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 26, էջ 211:
[2] Տե՛ս «Военная переписка В. И. Ленина», 1943, էջ 90:
[3] Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 27, էջ 72:
[4] Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 30, էջ 75:

***

Քաղաքացիական կռիվներում սովետական ժողովրդի և նրա երիտասարդ Կարմիր Բանակի հաղթանակների գործում կարևոր նշանակություն ունեցավ այն, որ պարտիայի Կենտկոմը, Վ. Ի. Լենինի գլխավորությամբ, հաշվի առնելով երկրի ներքին և միջազգային դրությունը, ուժերի հարաբերությունը, դասակարգային պայքարը, ճիշտ կռահելով թշնամու ռազմա-քաղաքական և ստրատեգիական պլաններ, մեծագույն հմտությամբ որոշում էր վճռական ռազմաճակատները և այնտեղ ուղղում սովետական ժողովրդի, պարտիայի ու Կարմիր Բանակի ուժերը։

Քաղաքացիական կռիվների և օտարերկրյա ինտերվենցիայի առաջին էտապում պարտիայի Կենտրոնական Կոմիտեն ռևոլյուցիայի բախտի որոշման համար գլխավոր ու վճռական ռազմաճակատ համարում է Արևելյան ճակատը։ Այս ռազմաճակատում 1918 թ. ամռանը հակառևոլյուցիայի գլխավոր հարվածող ուժը 60 հազար զինվորներից կազմված Չեխոսլովակյան կորպուսն էր, որը անգլո-ֆրանսիական իմպերիալիստների թելադրանքով մայիսի 25-ին ապստամբեց և փոխելով իր շարժման ընթացքը, ուղղություն վերցրեց դեպի Մոսկվա։ Չեխոսլովակյան կորպուսին ակտիվորեն օժանդակում էին Ուրալի սպիտակ կազակները, էսեռները, մենշևիկները և անգլո-ֆրանսիական իմպերիալիստները։ Չեխոսլովակյան կորպուսը մայիսի 26—31-ը գրավեց Նովոսիբիրսկը, Պենզան, Պետրոպավլովսկը, Տոմսկը, հուլիսի 22-ին՝ Սիմբիրսկը, օգոստոսի 6-ին՝ Կազանը և լուրջ վտանգ ստեղծեց Մոսկվայի համար։ Սովետական երիտասարդ ռեսպուբլիկայի համար ստեղծված այս դժվարին ու ծանր պայմաններում Վ. Ի. Լենինը, վերլուծելով ստեղծված իրադրությունը և ճիշտ կռահելով թշնամու ստրատեգիական պլանները, 1918 թ. ամռանը գլխավոր ու վճռական ռազմաճակատ, որտեղ որոշվում էր ռևոլյուցիայի բախտը, համարում է Արևելյան, այսինքն՝ Չեխոսլովակյան կորպուսի ռազմաճակատը։ Օգոստոսի 1-ին Վ. Ի. Լենինը Արևելյան ռազմաճակատի ղեկավարներին գրում է. «Այժմ ռևոլյուցիայի բախտը մազից է կախված— արագ հաղթանակ չեխոսլովակների դեմ, Կազան—Ուրալ—Սամարա ռազմաճակատում։ Ամբողջը կախված է դրանից»[1]։ Վ. Ի. Լենինը այնքան խոշոր նշանակություն էր տալիս Չեխոսլովակյան կորպուսի ջախջախմանը, որ 1918 թվականի օգոստոսի 23-ին հայտարարեց, թե «Ոչ միայն ռուսական, այլև միջազգային ռևոլյուցիայի փրկությունը չեխոսլովակյան ճակատումն է»[2]։ Հուլիսի վերջին պարտիայի Կենտկոմը, քննելով Արևելյան ճակատի դրությունը, հաստատեց Կարմիր Բանակի հակահարձակման պլանը։ Կենտրոնական Կոմիտեի որոշմամբ անհապաղ Արևելյան ճակատ ուղարկվեցին մի շարք նոր զորամասեր, փորձված հրամանատարներ և քաղաշխատողներ։

Արևելյան ճակատի համար կատարվեց կոմունիստների հատուկ մոբիլիզացիա։ Պարտիայի Կենտկոմի ձեռնարկած միջոցառումների հետևանքով ամրապնդվեց Արևելյան ճակատը և կանգնեցվեց թշնամու առաջխաղացումը։ Այնուհետև, Կարմիր Բանակն անցնելով հակահարձակման, սեպտեմբերի 10-ին ազատագրեց Կազանը, սեպտեմբերի 12-ին Սիմբիրսկը։ Սիմբիրսկի

---

[1] Տե՛ս «Военная переписка В. И. Ленина», էջ 32։

[2] Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 28, էջ 88։

ազատագրումը հանդիսացավ բեկման սկիզբ հօգուտ Կարմիր Բանակի. դա մեծագույն հարված էր հակառևոլյուցիայի ուժերին։

Հոկտեմբեր ամսին Կարմիր Բանակի զորամասերն ազատագրեցին Սիզրանը, Սամարան, նոյեմբերին՝ Իժևսկը, Բուգուրուսլանը, Բելիբեյը։

Թշնամու դեմ մղված այդ մարտերում աչքի ընկան այնպիսի քաջարի զորավարներ, ինչպիսիք էին Բլյուխերը, Չապաևը, Չևիրևը, Գայը, Պրոկոֆիևը և ուրիշներ։ Կարմիր Բանակի այդ հաջողություններն Արևելյան ճակատում վճռական նշանակություն ունեցան 1918 թ. ամռանը ներքին հակառևոլյուցիայի և արևմտյան իմպերիալիստների ստրատեգիական պլանները ձախողելու և սովետական երկրի գլխին կախված մահացու վտանգը վերացնելու գործում։

1918 թվականի աշնանը, երբ ձախողվեց Չեխոսլովակյան կորպուսի և Արևմուտքի մյուս հակառևոլյուցիոն ուժերի միջոցով Սովետական իշխանության տապալման փորձը, Անտանտի իմպերիալիստներն իրենց գլխավոր հարվածի վայր ընտրեցին Ռուսաստանի հարավը։ Անտանտի իմպերիալիստները լայն գործունեություն ծավալեցին Դենիկինի ընդհանուր հրամանատարության ներքո միավորելու Դոնի սպիտակգվարդիական և «կամավորական» բանակները և այն միացնելով հարավում գտնվող իրենց զինված ուժերին՝ հարվածել Մոսկվային։

1918 թ. վերջերին հարավից թշնամին անցնում է ընդհանուր հարձակման Դոնբասի վրա։ Մի պահ նորից ծանր դրություն է ստեղծվում Սովետական ռեսպուբլիկայի համար։ 8-րդ և 9-րդ Կարմիր բանակները, Հարավային ճակատում կրելով անհաջողություններ, դիմում են նահանջի։ Սովետական ռեսպուբլիկայի զինված ուժերը ջլատելու և նրա ուշադրությունը հարավից՝ որպես գլխավոր ճակատի, շեղելու նպատակով թշնամին ակտիվ գործողություններ է սկսում նաև երկրի այլ շրջաններում։ Հյուսիսից առաջ շարժվեցին անգլո-ամերիկյան դեսանտային բանակները։ Կոլչակը շարժվում է դեպի Պերմ՝ միանալու անգլո-ամերիկյան զորքերին՝ Մոսկվային հարվածելու մտադրությամբ։

Մեր երկրի համար ստեղծված այս ծանր օրերին՝ հոկտեմբերի 22-ին Վ. Ի. Լենինը Համառուսաստանյան Կենտգործկոմի, Մոսկվայի Սովետի և պրոֆմիությունների միացյալ նիստում վերլուծելով ստեղծված դրությունը, վճռական ճակատ համարում է Հարավային ռազմաճակատը [1]։

Վ. Ի. Լենինը դեկտեմբերի 15-ին ռեսպուբլիկայի ՌՌԽ-ին հրահանգում է Կարմիր Բանակի հիմնական ուժերը տրամադրել հարավին։ Հարավ են ուղարկվում մի շարք նոր զորամասեր։ Դեկտեմբեր-հունվար ամիսներին Հարավային ռազմաճակատ ուղարկվեցին ավելի քան 2500 կոմունիստներ։ Պարտիայի Կենտրոնական Կոմիտեի և Սովետական կառավարության ձեռնարկած միջոցառումների հետևանքով Կարմիր Բանակի զորամասերը 1918 թվականի դեկտեմբերի վերջերին կանգնեցրին հարավում թշնամու առաջխաղացումը։

1919 թվականի հունվարի 4-ին Հարավային ռազմաճակատի համալրված 8-րդ և 9-րդ բանակները, ինչպես և մինչ այդ Ցարիցինը (որը Հարավային ճակատի մի հատվածն էր) պաշտպանող 10-րդ բանակը անցնելով հակահար-

---

1 Վ. Ի. Լենին. Երկեր, հ. 28, էջ 138։

ձակման՝ կարողացան ետ մղել թշնամու ուժերը և ձախողել հարավից Մոսկվան գրավելու Անտանտի իմպերիալիստների պլանը։ Այդ նույն շրջանում Կարմիր Բանակի զորամասերը հաջող գործողություններ են ծավալում նաև մյուս ռազմաճակատներում։ 1919 թվականի հունվարին 3-րդ բանակը, անցնելով հակահարձակման, կանգնեցրեց Արևելյան ճակատում Կոլչակի, ինչպես նաև հյուսիսից անգլո-ամերիկյան ինտերվենցիոն բանակների առաջխաղացումը։

Կարմիր Բանակի այդ հաջողությունները մի կողմից և մյուս կողմից թիկունքի տեղական պարտիական կազմակերպությունների տարած քաղաքական-ագիտացիոն աշխատանքների հետևանքով ռևոլյուցիոն խմորումներ են սկսվում Ռուսաստան բերված անգլո-ամերիկյան և ֆրանսիական ինտերվենցիոն բանակներում։ Նրանց զինվորների գիտակից մասը հրաժարվում է կռվել Սովետական իշխանության դեմ և պահանջում վերադառնալ հայրենիք։ Սև ծով մտցված ֆրանսիական նավատորմում նույնիսկ բռնկվեց ապստամբություն։ Անտանտի հրամանատարությունը հարկադրված եղավ մի շարք ռազմաճակատներից իր զորքերը հանել և վերադարձնել հայրենիք։ Այս խոշոր հաղթանակ էր, որի մասին Վ. Ի. Լենինը գրել է՝ «անգլիացիների և ֆրանսիացիների փորձը՝ խեղդել Սովետական Ռուսաստանն իրենց զորքերով, փորձ, որը հաստատապես նրանց ամենահեշտ հաջողությունն էր խոստանում ամենակարճ ժամանակում, այդ փորձը կրախով վերջացավ՝ անգլիական զորքերը հեռացան Արխանգելսկից, ֆրանսիական զորքերը, որոնք ափ էին հանվել Հարավում, բոլորը հայրենիք տարվեցին... Այդ հաղթանակը, որ մենք տարանք, հարկադրելով հեռացնել անգլիական և ֆրանսիական զորքերը, մեր տարած ամենագլխավոր հաղթանակն էր Անտանտի դեմ։ Մենք նրանից խլեցինք նրա զինվորներին»[1]։

Ներքին և արտաքին հակառևոլյուցիան 1918 թ. վերջին 1919 թ. սկզբներին ձախողվելով հարավում, դարձյալ փոխեց իր գլխավոր հարվածի ուղղությունը։ 1919 թվականի գարնանը Անտանտը Սովետական իշխանության դեմ սկսում է նոր «կոմբինացված» արշավանք։ Այդ արշավանքում գլխավոր հարվածող բռունցքը հանդիսանում էր Կոլչակի բանակը արևելքից։ Կոլչակին հարավից օգնում էին Դենիկինի, հյուսիս-արևմուտքից՝ Յուդենիչի, արևմուտքից՝ պանական Լեհաստանի, հյուսիսից՝ Միլլերի և անգլո-ամերիկյան ու ֆրանսիական բանակները։

Լենինը ստրատեգի իր մեծագույն հմտությամբ 1919 թվականի ապրիլի 10-ին Պիտերի բանվորներին ուղարկած նամակում կանխատեսելով թշնամու ռազմա-ստրատեգիական նոր պլանները, գրում է, որ այժմ Արևելյան ճակատում է որոշվում ռևոլյուցիայի բախտը[2]։ Ուստի Կենտրոնական Կոմիտեն Լենինի գլխավորությամբ միջոցառումներ է մշակում ջախջախելու այդ արշավանքի գլխավոր ուժ հանդիսացող Կոլչակի մեծաքանակ բանակը։ Ապրիլի 11-ին պարտիայի Կենտրոնական Կոմիտեն հաստատեց Լենինի կողմից գրված «ՌԿ(բ)Պ Կենտկոմի թեզիսները Արևելյան ռազմաճակատի դրության կապակցությամբ»[3]։ Այդ թեզիսները դարձան Կոլչակի ջախջախման ռազմա-ստրա-

---

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 30, էջ 255, 256։

[2] Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 29, էջ 329։

[3] Նույն տեղում, էջ 331—335։

տեգիական և քաղաքական պլանի հիմքը։ Կենտրոնական Կոմիտեի որոշմամբ Արևելյան ռազմաճակատ ուղարկվեցին նոր ուժեր, այդ թվում ավելի քան 20 հազար կոմունիստներ։ Թշնամուն թեային հզոր հարված հասցնելու համար ստեղծվեց Արևելյան ռազմաճակատի հարավային խումբ, որի գլխավոր հրամանատար նշանակվեց Մ. Ֆրունզեն, իսկ Ռազմա-հեղափոխական խորհրդի անդամ՝ Վ. Կույբիշևը։

1919 թվականի ապրիլի 28-ին Արևելյան ռազմաճակատի հարավային խումբը անցնելով հակահարձակման, թշնամուն շպրտեց Ուրալ։ Մեծ եղավ Կենտկոմի դերը, Լենինի գլխավորությամբ, ապահովելու նաև Ուրալի և Սիբիրի աղատագրումը Կոլչակի բանդաներից։

Հայտնի է, որ Տրոցկու անմիջական ցուցումով Կարմիր Բանակի գլխավոր հրամանատար Վացետիսը, Կարմիր Բանակի առաջին հաջողություններից հետո, հրահանգեց Արևելյան ճակատի հրամանատարությանը Կոլչակի դեմ անցնել պաշտպանության, իսկ գլխավոր ուժերը փոխադրել հարավ։ Լենինն այդ համարեց մեծագույն սխալ և մայիսի 29-ին Արևելյան ճակատի հրամանատարությանն ուղղած իր հեռագրով նախազգուշացրեց. «եթե մենք մինչև ձմեռ չտիրենք Ուրալը, ապա ես գտնում եմ, որ հեղափոխության կործանումն անխուսափելի է»[1]։ Հունիսի 15-ին Կենտրոնական Կոմիտեն բեկանեց Տրոցկու-Վացետիսի վնասակար հրահանգը։ Կարմիր Բանակը, առաջնորդվելով Կոլչակի ջախջախման լենինյան պլանով, փայլուն կերպով կատարեց իր խնդիրը։ Կոլչակը վերցվեց, մի կողմից, Կարմիր Բանակի հարձակվող ուժերի, մյուս կողմից, Սիբիրի պարտիզանների աքցանի մեջ և գլխովին ջախջախվեց, Ուրալը և Սիբիրը աղատագրվեցին։ 1919 թվականի դեկտեմբերին Իրկուտսկում ապստամբած բանվորները բանտարկեցին Կոլչակին և նրա «մինիստրներին»։ Կոլչակի ռազմական դիկտատուրան ոչնչացվեց։ Անտանտի իմպերիալիստները 1919 թ. ամառվա վերջին, աշնան սկզբին Սովետական ռեսպուբլիկայի դեմ սկսում են իրենց նոր կոմբինացված արշավանքը։ Այս արշավանքի գլխավոր հարվածող ուժը դառնում է Դենիկինի բանակը՝ հարավում։ Այսպիսով, 1919 թ. ամռանը-աշնանը Սովետական ռեսպուբլիկայի բախտը որոշող վճռական ռազմաճակատ դառնում է դարձյալ Հարավային ճակատը։

1919 թ. հուլիսի 3-ին Դենիկինն իր բանակին հրաման արձակեց՝ անցնել ընդհանուր հարձակման Մոսկվան գրավելու համար։ Անտանտի հրամանատարության կողմից մշակված պլանով այդ նույն ժամանակ գեներալներ Կոլչակի, Միլլերի, Յուդենիչի բանակները, բուրժուա-կալվածատիրական Լեհաստանը և հակահեղափոխության մյուս ուժերը հարձակումներ սկսեցին արևելքից, հյուսիսից և արևմուտքից, նպատակ ունենալով հեշտացնել Դենիկինի հաղթանակը։

Սովետական ռեսպուբլիկայի գլխին նորից կախվեց մահացու վտանգ։ Մեր երկրի համար ստեղծված այդ ծանր օրերին, հուլիսի 3—4-ը, տեղի ունեցավ պարտիայի Կենտրոնական Կոմիտեի պլենումը, որը միջոցառումներ մշակեց երկրի պաշտպանությունն ապահովելու և Անտանտի նոր արշավանքը ձախողելու համար։ Պլենումը պահանջեց ամրապնդել բանակի հրամանատարությունը։ Նա հիմնովին վերանայեց ռեսպուբլիկայի ՌՈՒ-ի կազմը և վերակառուցեց նրա աշխատանքը։ Պլենումի հանձնարարությամբ ժողկոմսովետը

[1] Տե՛ս «Военная переписка В. И. Ленина», 1956, էջ 137։

հուլիսի 8-ին բանակի գլխավոր հրամանատար նշանակեց Ս. Ս. Կամենևին (Վացետիսի փոխարեն)։

Պարտիայի Կենտրոնական Կոմիտեն քննեց և հաստատեց Լենինի կողմից գրված «Բոլորս պայքարի՝ Դենիկինի դեմ» պատմական նամակը [1], որը հրապարակվեց հուլիսի 9-ին և մեծագույն նշանակություն ունեցավ սովետական ժողովրդի և Կարմիր Բանակի ուժերը մոբիլիզացնելու և Դենիկինի ջախջախումն ապահովելու համար։

Կենտրոնական Կոմիտեն Հարավային ճակատի ղեկավարությունն ուժեղացնելու համար այնտեղ ուղարկեց մի շարք ղեկավար պարտիական-պետական գործիչների։ Կենտրոնական Կոմիտեի հանձնարարությամբ բանակի նոր գլխավոր հրամանատար Ս. Կամենևը մշակում է Դենիկինի դեմ Կարմիր Բանակի հակահարձակման պլանը, որը պետք է իրագործվեր օգոստոսի սկզբին։ Նկատի ունենալով այն, որ թշնամու գլխավոր ուժերի կուտակումները 1919 թ. ամառվա սկզբներին գտնվում էին Դոնից արևելք, Ս. Կամենևի մշակած այդ պլանը նախատեսում էր թշնամուն հարվածել Ցարիցինի ուղղությամբ։

Կարմիր Բանակի գլխավոր հրամանատարությունը, առաջարկելով այդ պլանը, նպատակ ուներ թույլ չտալ Վոլգայի ուղղությամբ շարժվող Դենիկինի զորքերին միանալու Կոլչակի բանակի հարավային ուժերի հետ, և, բացի դրանից, այդ ուղղությամբ հարձակվող Կարմիր Բանակը ավելի հեշտ ու արագ կարող էր համալրվել Արևելյան ճակատի ուժերով և թեային հզոր հարվածով մխրճվել Դենիկինի բանակի խորը թիկունքը [2]։ Եթե հաշվի առնենք այս ամենը, Ս. Կամենևի մշակած պլանը իր ժամանակի համար ճիշտ պլան էր, և այն հավանություն ստացավ պարտիայի Կենտկոմի կողմից։ Սակայն այս պլանը հաջողություն չունեցավ, որովհետև Կարմիր Բանակը նախատեսված ժամանակից ուշ սկսեց իր հարձակումը։ Այդ գործում դարձյալ իրենց վնասակար դերը խաղացին Տրոցկին և նրա գործակալները։ Այդ պլանի անհաջողությանը նպաստեց նաև այն, որ Դենիկինը իր գործակալների միջոցով տեղեկանալով նշված պլանի բոլոր մանրամասնություններին՝ դիմեց արագ միջոցների՝ ձախողելու Կարմիր Բանակի հարձակումը։ Նա Մամոնտովի հեծելազորը շպրտեց Հարավային ռազմաճակատի թիկունքը և հարձակման համար նախատեսված Կարմիր Բանակի գլխավոր ուժերի ուշադրությունը դրանով իսկ բևեռեց Մամոնտովի վրա և ժամանակ շահեց, ստեղծեց հարավային հզոր բռունցք, որը ուղղեց Մոսկվայի դեմ նոր ուղղությամբ՝ Կուրսկ—Օրյոլ—Տուլա գծով։ Գրավելով Օրյոլը, Դենիկինը սպառնում է Տուլային և ստեղծում անմիջական վտանգ Մոսկվայի համար։

Դենիկինի հաջողության պատճառներից մեկն էլ ռեսպուբլիկայի Ռազմա-ռևոլյուցիոն խորհրդի վատ աշխատանքն էր, որի գլուխ կանգնած էր Տրոցկին։ Ահա թե ինչու Վ. Ի. Լենինը մեծագույն սրությամբ քննադատում է ՌՌԽ-ի գործունեությունը և վճռականորեն պահանջում արմատականորեն բարելավել նրա աշխատանքները։ Այդ առթիվ Լենինը Ռազմա-ռևոլյուցիոն խորհրդի անդամ Գուսևին գրում է. «Ընկեր Գուսև։ Խորամուխ լինելով Սկլյանսկու նամակի (գործերի դրության մասին 15/IX) և ամփոփագրերի արդյունք-

[1] Վ. Ի. Լենին. Երկեր, հ. 29, էջ 535—559։

[2] Տե՛ս Սովետական Միության Կոմունիստական պարտիայի պատմություն, Երևան, 1959, էջ 372—373։

ների մեջ, ես համոզվում եմ, որ մեր Ռեսպուբլիկայի Ռազմահեղափոխական խորհուրդը վատ է աշխատում։

Հանգստացնել ու հանգստացնել—դա վատ տակտիկա է։ Ստացվում է «հանգստացնելու խաղ»։

Իսկ իրականում մեզ մոտ լճացում է—գրեթե փլուզում։

Սիբիրյան ռազմաճակատում դրել են ինչ-որ սրիկա Օլդերոգի և վախկոտ Պոպերնին և «հանգստացել»։ Ուղղակի խայտառակություն է։ Իսկ մեզ սկսել են խփել։ Մենք դրա համար պատասխանատու կդարձնենք Ռեսպ. Ռազմահեղափոխական խորհրդին, եթե ձեռք չառնվեն եռանդուն միջոցներ։ Հաղթանակը ձեռքից բաց թողնելը խայտառակություն է... Այդպես չի կարելի։ Պետք է աշխատանքի ենկուռ տեմպը վերափոխել կենդանի տեմպի»[1]։

Սեպտեմբերի 21-ին հրավիրվեց պարտիայի Կենտրոնական Կոմիտեի պլենումը, որը քննարկեց Հարավային ճակատի վիճակը և մշակեց մի շարք միջոցառումներ՝ թշնամուն գիմադրելու և ջախջախելու համար։ Պլենումը մասնավորապես անհրաժեշտ համարեց Վորոնեժի հատվածում ստեղծել թշնամու թևերին հարվածող ուժեղ խումբ։ Այդ նպատակի համար առանձնացվեցին Բուդյոննու հեծյալ կորպուսը, լատիշական դիվիզիան և այլ ուժեր։ Պլենումը միաժամանակ որոշեց ռազմաճակատի կենտրոնական հատվածում կուտակել խոշոր ուժեր՝ Վորոնեժ—Խարկով գծով հակահարձակման անցնելու համար, իսկ նախկին ընդհանուր Հարավային ռազմաճակատը բաժանել Հարավային և Հարավ-արևելյան երկու ինքնուրույն ռազմաճակատների։

Նոր կազմակերպված Հարավային ռազմաճակատը հայտարարվեց գլխավոր ճակատ։ Սեպտեմբերի 26-ին Հարավային ռազմաճակատի Ռազմա-հեղափոխական խորհրդի անդամ նշանակվեց Ի. Ստալինը։ Հարավային ռազմաճակատ ուղարկվեցին մի շարք այլ ղեկավար գործիչներ, այդ թվում՝ Կ. Վորոշիլովը, Ս. Օրջոնիկիձեն, Ս. Կիրովը, Վ. Պոտյոմկինը, Ռ. Զեմլյաչկան, Ս. Անուչինը, Պ. Սոլոդուխինը և ուրիշներ։

Հոկտեմբերի սկզբին Հարավային ռազմաճակատի գլխավոր հրամանատար նշանակվեց Ա. Եգորովը։ Պարտիայի Կենտրոնական Կոմիտեն Հարավային ռազմաճակատ ուղարկեց մոտ 30 հազար կոմունիստ և ավելի քան 10 հազար կոմերիտականներ։

1919 թվականի հոկտեմբերի 15-ին պարտիայի Կենտրոնական Կոմիտեի Քաղբյուրոն վճռական նշանակություն տալով ռազմաճակատի կենտրոնական հատվածին, որոշեց Հարավ-արևելյան ճակատում անցնել պաշտպանության, իսկ Հարավային ճակատում՝ հարձակման։ Այդ նպատակով նա Կարմիր Բանակի գլխավոր հրամանատարությունից պահանջեց իր բոլոր պահեստային ուժերը տրամադրել Հարավային ռազմաճակատին, որպես գլխավոր, վճռական ճակատի։ Այսպիսով պարտիայի սեպտեմբերյան պլենումի և Քաղբյուրոյի հոկտեմբերի 15-ի որոշումներով փաստորեն մի կողմ թողնվեց Դենիկինին հարվածելու հին պլանը և սկսեց աստիճանաբար ծնունդ առնել Կարմիր Բանակի՝ Խարկով—Դոնբաս—Ռոստով ուղղությամբ հարձակվելու նոր պլանը։

Հոկտեմբերի 20-ին Հարավային ռազմաճակատի զորամասերը անցնելով հարձակման, ազատագրեցին Օրյոլը։

Բուդյոննու հեծյալ կորպուսը Վորոնեժի տակ ջախջախեց Շկուրոյի և Մա-

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 35, էջ 457, 458։

մոնտովի հեծելազորը։ Հոկտեմբերի 24-ին Կարմիր Բանակի զորամասերը գրավեցին Վորոնեժը։

Նոյեմբերի 14-ին Լենինի նախաձեռնությամբ պարտիայի Կենտկոմի Քաղբյուրոն նորից քննության առնելով Հարավային ճակատի հարցը՝ Կարմիր Բանակի գլխավոր հրամանատարությունից պահանջեց բոլոր ռեզերվները տրամադրել Հարավային ռազմաճակատին և սկսել ընդհանուր հարձակում Խարկով—Դոնբաս—Ռոստով ուղղությամբ։ Հարավային ռազմաճակատի Կարմիր Բանակի զորամասերը գործելով պարտիայի Կենտրոնական Կոմիտեի սեպտեմբերյան պլենումի և Քաղբյուրոյի հոկտեմբերի 15-ի ու նոյեմբերի 14-ի նիստերի տգով նախագծված հարձակման նոր պլանով՝ 1919 թվականի վերջին 1920 թ. սկզբին հաջողությամբ իրագործեցին Դենիկինի բանակների ջախջախումը։ Վերոհիշյալ փաստերը միաժամանակ անժխտելիորեն ապացուցում են, որ Դենիկինի ջախջախման պլանը նույնպես լիովին ու ամբողջովին պարտիայի Կենտկոմի պլանն էր, Կենտկոմի կոլեկտիվ մտքի արգասիքը։

Ջախջախիչ պարտություն կրելով Կարմիր Բանակի հարվածներից, Դենիկինը մի պահ ծրագրում է իր բանակի մնացորդներով գրավել Անգրկովկասը, համալրել և կազդուրել իր բզկտված ուժերը և Անդրկովկասը պլացդարմ դարձնել Սովետական Ռուսաստանի դեմ նոր արշավանք սկսելու համար։ Հայտնի է, որ դենիկինյան բանակին ակտիվ օգնություն էին ցույց տալիս նաև Անդրկովկասի հակառևոլյուցիոն կառավարությունները։ Այդ օգնությունը նախ և առաջ արտահայտվում էր նրանում, որ դաշնակների, մենշևիկների և մուսավաթականների կառավարությունները ապահովում էին Դենիկինի թիկունքը Անդրկովկասի ռևոլյուցիոն ուժերի գրոհից։ Բացի դրանից, անդրկովկասյան հակառևոլյուցիոներները Դենիկինին ցույց էին տալիս նաև անմիջական ռազմական օգնություն։ Դաշնակները, օրինակ, Դենիկինին տրամադրել էին անգլիացիների կողմից հատուկ զինած ու հանդերձավորված հայկական զինվորական միավորներ։ Սակայն գլխովին ձախողվեցին նաև Դենիկինի՝ Անգրկովկասում ամրանալու պլանները։ Այդ գործում կարևոր նշանակություն ունեցավ բոլշևիկյան կազմակերպությունների ղեկավարությամբ երկրամասի աշխատավորական մասսաների ռևոլյուցիոն պայքարը։ Դեպի Սովետական իշխանությունն ունեցած ջերմ ձգտմամբ և սիրով պետք է բացատրել նաև այն, որ Հյուսիսային Կովկասի, Դոնի և Ազովի շրջանների գաղթական ու տեղացի հայերը անհուն թշնամանքով էին լցված դնդի Դենիկինը և ակտիվ օգնություն էին ցույց տալիս նրա բանակի դեմ կռվող Կարմիր Բանակի զորամասերին։ Քիչ չէին նաև այն դեպքերը, երբ Դենիկինի բանակը բռնի ծառայության քշված հայերը հրաժարվում էին կռվել և հաճախ անցնում էին Կարմիր Բանակի կողմը ու զենքն ուղղում սպիտակգվարդիականների դեմ։ Անդրկովկասում ամրանալու Դենիկինի պլանի ձախողման գործում վճռական նշանակություն ունեցավ հատկապես այն, որ Կարմիր Բանակի զորամասերը, պարտության մատնելով դենիկինյան զորքերին, արագորեն մոտեցան Անդրկովկասի սահմաններին։ Այս հանգամանքը միաժամանակ մեծապես խթանեց Անդրկովկասում ռևոլյուցիոն պայքարի վերելքը, օգնեց մասսաների վճռական գրոհին՝ Ադրբեջանում, Հայաստանում և Վրաստանում սովետական կարգերի հաստատման համար։

Դենիկինի ջախջախումից հետո, բոլշևիկների պարտիան, Վ. Ի. Լենինի գլխավորությամբ առաջնահերթ խնդիր է համարում ներքին ու արտաքին

թշնամու դեմ վերջնական հաղթանակի կազմակերպումը։

1920 թվականի գարնանը Սովետական ռեսպուբլիկայի համար նորից ծանր վիճակ է ստեղծվում։ Արևմտյան իմպերիալիստները Սովետական իշխանության տապալման համար նրա դեմ սկսում են նոր արշավանք, այս անգամ իրենց գլխավոր հույսը դնելով Արևմուտքում՝ բուրժուա-կալվածատիրական լեհական և հարավում՝ գեներալ Վրանգելի բանակների վրա։ 1920 թվականի ապրիլի 25-ին լեհական բանակը, անցնելով հարձակման, գրավում է Կիևը։ Հարձակողական գործողություններ է սկսում նաև Կրիմում ծվարած Վրանգելի բանակը։ Պարտիայի Կենտրոնական Կոմիտեն մշակում է միջոցառումներ Անտանտի այդ նոր արշավանքի ջախջախման համար։ Մայիսի 23-ին հրապարակվում են Կենտրոնական Կոմիտեի «Լեհական ճակատը և մեր խնդիրները» թեզիսները։ Սպիտակ լեհերի և Վրանգելի բանակների դեմ ուղարկվում են Կարմիր Բանակի ամենամարտունակ ուժերը։ Հարավ-արևմտյան, ապա և Արևմտյան ռազմաճակատների զորքերը, անցնելով հակահարձակման, նետ շպրտեցին լեհական բանակներին և 1920 թվականի հուլիսի վերջին մոտեցան Վարշավայի մատույցներին։ Սակայն արևմտյան իմպերիալիստական պետությունների օգնությամբ լեհական բանակը համախմբում է իր ուժերը և օգոստոսի կեսերին անցնում հակահարձակման։ Սովետական հրամանատարության թույլ տված սխալների, ինչպես և մի շարք այլ պատճառների, հետևանքով Կարմիր Բանակի առաջապահ զորամասերը, կտրվելով թիկունքից, հարկադրված եղան դիմել որոշ նահանջի։ Սակայն սեպտեմբերին, լեհական ճակատում կենտրոնացնելով լրացուցիչ ուժեր, Կարմիր Բանակի հրամանատարությունը պատրաստվում է թշնամու դեմ սկսել նոր հարձակում։ Զգալով իր բանակի անիուսափելի պարտությունը, Լեհաստանի բուրժուա-կալվածատիրական կառավարությունը 1920 թվականի հոկտեմբերին հաշտություն կընքեց Սովետական կառավարության հետ։

Լեհաստանի հետ պատերազմն ավարտելուց հետո Մ. Ֆրունզեի հրամանատարությամբ Հարավային ռազմաճակատի զորքերը Վրանգելի դեմ սկսում են վճռական հարձակում և նոյեմբերին, ջախջախելով նրա բանակները, ազատագրում Ղրիմը։ Դրանով էլ հենց գլխովին ձախողվեց Անտանտի իմպերիալիստների՝ նոր ռազմական ինտերվենցիայի միջոցով Սովետական իշխանությունը տապալելու այս փորձը ևս։

1921 թվականի վերջերին և 1922 թվականին Կարմիր Բանակը Հեռավոր Արևելքում նույնպես վերջնականապես ջախջախեց ճապոնական և սպիտակգվարդիական բանակներին։ Այսպիսով Սովետական ռեսպուբլիկայի դեմ սկսված երկարատև օտարերկրյա ինտերվենցիան և ներքին քաղաքացիական կռիվները ավարտվեցին Սովետական իշխանության հաղթանակով, ներքին և արտաքին թշնամիների կատարյալ ջախջախմամբ։

***

Քաղաքացիական կռիվներում օտարերկրյա ինտերվենտների և ներքին հակահեղափոխական ուժերի դեմ սովետական ժողովրդի տարած պատմական հաղթանակների կարևորագույն գործոններից մեկն էլ այն էր, որ բոլշևիկների պարտիան հետևողականորեն իրագործելով լենինյան ազգային քաղաքականությունը, կարողացավ համախմբել մեր երկրի բոլոր ժողովուրդների ուժերը

և նրանց ակտիվ պայքարի հանել ռևոլյուցիայի թշնամիների դեմ։ Մեր այս միտքը հաստատելու համար թեկուզ խիստ համառոտ կերպով անդրադառնանք այն ջերմ բարեկամությանը, որպիսին քաղաքացիական կռիվների կրակի ու բոցերի մեջ հաստատվեց հայ և ռուս աշխատավորների միջև, մի բարեկամություն, որը իրոշորագույն նշանակություն ունեցավ Հայաստանում դաշնակների արյունալի տիրապետության տապալման, այնտեղ սովետական կարգերի հաստատման, հայ ժողովրդին ֆիզիկական ընաջնջումից փրկելու ու նրա ազգային վերածննդի համար։

1917 թվականի դեկտեմբերի 31-ին հրապարակվեց Սովետական կառավարության 1917 թվականի դեկտեմբերի 29-ին ընդունած նշանավոր դեկրետը «Թուրքահայաստանի մասին», որը լավագույն վկայություն է դեպի հայ ժողովուրդը Ռուսաստանի երիտասարդ Սովետական կառավարության ունեցած մեծագույն հոգատարության։

Մեծ էր Սովետական Ռուսաստանի օգնությունը թուրքական յաթաղանից դաղթած հայերի նկատմամբ։ 1917 թվականի դեկտեմբերին Մոսկվայում ՌՍՖՍՌ Ազգությունների գործերի ժողովրդական կոմիսարիատին կից հիմնված Հայկական գործերի կոմիսարիատի տրամադրության տակ Սովետական Ռուսաստանի կառավարությունը զգալի չափով դրամական միջոցներ դրեց՝ Ռուսաստան գաղթած հայերին օգնություն ցույց տալու նպատակով։

Հայ և ռուս ժողովուրդների եղբայրական բարեկամությունը առանձնապես մեծ ուժով դրսևորվեց Հայաստանում սովետական կարգերի հաստատման համար մղված պայքարում։ Հայաստանում ապստամբության դրոշ պարզած ռևոլյուցիոն ուժերի խնդրանքով, Վ. Ի. Լենինի անմիջական ցուցումով, նրանց օգնության եկավ Ս. Կիրովի և Ս. Օրջոնիկիձեի գլխավորած 11-րդ Կարմիր Բանակը, և 1920 թվականի նոյեմբերի 29-ին Հայաստանում հաստատվեց Սովետական իշխանություն։

Ադրբեջանում, Հայաստանում և Վրաստանում սովետական կարգերի հաստատմամբ անդրկովկասյան ժողովուրդները ոչ միայն թոթափեցին մուսավաթականների, դաշնակների, մենշևիկների և նրանց հովանավոր արևմտյան իմպերիալիստների արյունալի տիրապետությունը, այլև դրանով ձախողվեցին նաև օտարերկրյա օկուպանտների՝ Անդրկովկասը Սովետական Ռուսաստանի դեմ որպես պլացդարմ օգտագործելու պլանները։

Քաղաքացիական կռիվների և օտարերկրյա ինտերվենցիայի ծանր տարիներին Սովետական Ռուսաստանի մարտական ուժերին ակտիվ օգնություն ցույց տվին նաև հայ ժողովրդի զավակները։ Քաղաքացիական կռիվների ամենադժվարին պահին, երբ Վ. Ի. Լենինը դիմեց ժողովրդին «Ամեն ինչ ռազմաճակատի համար, ամեն ինչ հաղթանակի համար» մարտական կոչով, Հայկական գործերի կոմիսարիատը լայն գործունեություն ծավալեց Ռուսաստան, Ուկրաինա, Հյուսիսային Կովկաս և այլ վայրերը գաղթած, ինչպես և Ռուսաստանի դաղութավայրերի բնիկ հայերի լայն շրջաններում, կոչ անելով նրանց՝ մտնելու Կարմիր Բանակի շարքերը և զենքով պաշտպանելու Սովետական Հայրենիքը։ Հայրենասիրական այդ կոչը մեծ արձագանք գտավ հայ աշխատավորության լայն շրջաններում։ Բազմաթիվ հայեր մտան Կարմիր Բանակի շարքերը։ Ռուսաստանի առանձին վայրերում նույնիսկ ստեղծվում են հայկական հատուկ զորային միավորներ՝ Կարմիր Բանակի կազմում թշնամու դեմ կռվելու համար։ Հազարավոր հայ զինվորներ, հրամանատարներ ու քաղաշ-

խատողներ մասնակցեցին Ռուսաստանի երիտասարդ Սովետական ռեսպուբլիկայի պաշտպանության համար մղված հերոսամարտերին։

Քաղաքացիական կռիվների և օտարերկրյա ինտերվենցիայի տարիներին Կարմիր Բանակի շարքերում հանդես եկան ու աճեցին բազմաթիվ անձնվեր ու քաջ հայ հրամանատարներ և քաղաշխատողներ, որոնք իրենց ավանդը դրեցին թշնամու ջախջախման գործում։

Նորաստեղծ Կարմիր Բանակի տաղանդավոր կազմակերպիչներից և նրա ականավոր ռազմական ու քաղաքական գործիչներից մեկն էր Լենինի անձնվեր աշակերտ Ալ. Մյասնիկյանը։ 1917 թվականի նոյեմբերին Արևմտյան ռազմաճակատի զինվորների ու սպաների պատգամավորների համագումարը Ալ. Մյասնիկյանին ընտրեց Արևմտյան ռազմաճակատի զորքերի գլխավոր հրամանատար։ Նա կարճատև ժամանակով կատարեց նաև Կարմիր Բանակի գերագույն գլխավոր հրամանատարի պարտականությունները։ Ալ. Մյասնիկյանը 1918 թվականի գարնանը նշանակվեց Պովոլժյեի ռազմաճակատի հրամանատար և, որպես այդպիսին, խոշոր դեր խաղաց այդ ռազմաճակատում հակառևոլյուցիոն ուժերի դեմ մղվող պայքարում։ Այնուհետև, Ալ. Մյասնիկյանին մենք տեսնում ենք Բելոռուսիայի Կենտրոնական Գործադիր Կոմիտեի նախագահի, Բելոռուսիայի Կոմպարտիայի Կենտրոնական բյուրոյի նախագահի, Մոսկվայի պարտիայի քաղաքային կոմիտեի առաջին քարտուղարի և ռազմական կազմակերպչի, ապա՝ Արևմտյան ռազմաճակատի քաղվարչության պետի պաշտոններում։ Ուր էլ որ լիներ՝ պարտիական, պետական թե ռազմական ղեկավար աշխատանքներում՝ նա այդ էտապում իր գլխավոր ուշադրությունը կենտրոնացնում էր իրագործելու պարտիայի կողմից տրված «Ամեն ինչ ռազմաճակատի համար, ամեն ինչ հաղթանակի համար» մարտական լոզունգը։ 1921 թվականին Ալ. Մյասնիկյանն ընտրվեց Հայկական ՍՍՌ Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի նախագահ՝ Հայկական ՍՍՌ ռազմական գործերի ժողովրդական կոմիսար, ինչպես և նշանակվեց առանձին Կովկասյան բանակի Ռազմա-ռևոլյուցիոն խորհրդի անդամ և իրեն հատուկ եռանդով մեծագույն հմտությամբ գլխավորեց Հայաստանի լեռնային շրջաններում (Զանգեզուրում) ամրացած դաշնակցական բանդաների ջախջախման և վերջնական լիկվիդացման գործը։

Քաղաքացիական կռիվների տարիներին օտարերկրյա ինտերվենտների ու սպիտակգվարդիական բանակների դեմ սովետական ժողովրդի ու նրա երիտասարդ Կարմիր Բանակի մղած հերոսամարտերում իր տաղանդով ու զորավարական բարձր արվեստով փայլեց Կարմիր Բանակի լենինյան նոր տիպի զորավար Գայը (Հայկ Բժշկյան)։ 1918 թվականի դարնան-ամռան ամիսներին Գայի գլխավորած դիվիզիան, Կարմիր Բանակի մյուս զորամասերի հետ միասին, խոշոր դեր խաղաց Չեխոսլովակյան կորպուսի ուժերի ջախջախման և նրա կողմից գրավված քաղաքների ազատագրման գործում։ 1919 թվականին Գայի I բանակը քիչ դեր չխաղաց Կոլչակի ջախջախման համար մղված մարտերում։ Նրա հրամանատարության տակ գործող հեծյալ կորպուսը իր խիզախ ու համարձակ ռազմական գործողություններով աչքի ընկավ նաև բուրժուա-կալվածատիրական բանակների դեմ մղված մարտերում։

Որպես ականավոր զորավար և ռազմական խոշոր տեսաբան՝ Գայը իր բազմաթիվ արժեքավոր աշխատություններով գնահատելի ծառայություն է

մատուցել սովետական ռազմական տեսության ու Կարմիր Բանակի պատմության հարցերի մշակմանը։

Քաղաքացիական կռիվների տարիներին Կարմիր Բանակի շարքերում ներքին հակառևոլյուցիոն ուժերի և օտարերկրյա ինտերվենցիոն բանակների դեմ կռվում էին նաև բազմաթիվ ուրիշ հայ հրամանատարներ ու քաղաշխատողներ։ Սակայն մեր բերած օրինակները նույնպես բավական են ցույց տալու այն ռազմական համագործակցությունը և մարտական բարեկամությունը, որը հաստատվեց այդ տարիներին հայ և ռուս ժողովուրդների միջև։

Լենինյան ազգային քաղաքականության հետևողական իրագործման հետևանքով նույնպիսի սերտ բարեկամություն ու համագործակցություն էր հաստատվել նաև մեր երկրի մյուս բոլոր ժողովուրդների միջև, որը և քաղաքացիական կռիվների ու օտարերկրյա ինտերվենցիայի տարիներին դարձավ թշնամու դեմ սովետական ժողովրդի տարած հաղթանակների գլխավոր գործոններից մեկը։

***

Քաղաքացիական կռիվների ամբողջ պատմությունը պերճախոս վկայություն է այն բանի, որ Սովետական Հայրենիքի ազատության ու անկախության համար ներքին հակառևոլյուցիոն և օտարերկրյա ինտերվենցիոն բանակների դեմ մղված բոլոր գոտեմարտերում սովետական ժողովրդի և նրա զինված ուժերի տարած փառապանծ հաղթանակների ոգեշնչողը, կազմակերպիչն ու ղեկավարը հանդիսանում էր բոլշևիկների պարտիան։ Քաղաքացիական կռիվների ռազմաճակատներում Կարմիր Բանակի շարքերում կռվում էին ավելի քան 300 հազար կոմունիստներ, որոնցից 50 հազարը զոհվեցին տարբեր ռազմաճակատներում։ Վ. Ի. Լենինը պարտիայի IX համագումարում ամփոփելով քաղաքացիական կռիվների արդյունքները թշնամու դեմ տարած հաղթանակի գործում, պարտիայի խաղացած պատմական մեծագույն դերի մասին ասել է.

«Եվ միայն շնորհիվ այն բանի, որ պարտիան իր դիրքում էր, որ պարտիան խիստ կարգապահ էր, և այն պատճառով, որ պարտիայի հեղինակությունը միավորում էր բոլոր գերատեսչություններն ու հիմնարկները, և Կենտկոմի տված լոզունգով ընթանում էին, ինչպես մեկ մարդ, տասնյակները, հարյուրներն ու հազարները և վերջին հաշվով միլիոնները, միայն այն պատճառով, որ անասելի զոհաբերություններ տեղի ունեցան,—միայն այս պատճառով այն հրաշքը, որ կատարվեց, կարող էր տեղի ունենալ։ Միայն այս պատճառով էր, որ չնայելով Անտանտի իմպերիալիստների և ամբողջ աշխարհի իմպերիալիստների կրկնակի, եռակի և քառակի արշավանքներին, մենք կարողացանք հաղթել» [1]։

Պարտիայի Կենտրոնական Կոմիտեն քաղաքացիական կռիվների և օտարերկրյա ինտերվենցիայի տարիներին հանդիսանում էր մեր երկրի ոչ միայն քաղաքական, այլև ռազմական շտաբը։ Ինչպես տեսանք, քաղաքացիական կռիվների տարիներին պարտիայի Կենտկոմը քննում, մշակում և հաստատում

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 30, էջ 569։

էր գլխավոր ռազմաճակատների ռազմական պլանները և թշնամու դեմ հաղթանակ տանելու այլ միջոցառումներ։ Կենտկոմը ռազմաճակատ էր ուղարկում պարտիայի ականավոր գործիչներին, ապահովելու թշնամու ջախջախման միջոցառումների իրագործումը։

Քաղաքացիական կռիվների հերոսամարտերում Կարմիր Բանակի հաղթանակների և թշնամու ջախջախման ու սովետական ժողովրդի ձեռք բերած պատմական մեծագույն հաղթանակների գործում անսահման մեծ է Վ. Ի. Լենինի խաղացած դերը։ Վ. Ի. Լենինը, որպես Սովետական կառավարության ղեկավար, բանվորա-գյուղացիական պաշտպանության խորհրդի նախագահ և պարտիայի առաջնորդ, իր անսպառ եռանդը, «լեռներ շարժող ռևոլյուցիոն կիրքը», մասսաներին գերող հմայքն ու անսահման հեղինակությունը, ռևոլյուցիոն ստրատեգի ու անզուգական կազմակերպչի ամբողջ ունակությունները նվիրեց քաղաքացիական կռիվներում թշնամու ջախջախման, Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի հաղթանակի ամրապնդման գործին։ Վ. Ի. Լենինը քաղաքացիական կռիվների ամբողջ շրջանում իր փոթորկալից ու բեղմնավոր կյանքի ամեն մի օրը, ամեն մի ժամն ու վայրկյանը լիովին ենթարկել էր պարտիայի կողմից տրված «Ամեն ինչ ռազմաճակատի համար, ամեն ինչ հաղթանակի համար» մարտական լոզունգի կենսագործմանը։ Վ. Ի. Լենինի մերձավոր աշխատակիցներից մեկը՝ Մ. Ի. Գլյասերը իր հիշողություններում, նկարագրելով այդ տարիներին Վ. Ի. Լենինի աշխատանքային օրը, գրել է, որ՝ քաղաքացիական կռիվների ժամանակ Լենինի աշխատասենյակը հանդիսանում էր բոլոր ռազմական գործողությունների «գլխավոր շտաբը»։ Նրա սեղանի վրա գրեթե միշտ փռված էին ռազմական քարտեզները, որոնց վրա նա կողմնորոշվում էր ավելի լավ, քան ցանկացած ճակատային։ Նա պահանջում էր իրեն ներկայացնել հաղորդագրություններ ռազմական գործողությունների բոլոր մանրուքների մասին։ Նա ամեն օր ուղարկում էր տասնյակ հեռագրեր, հրավիրում էր զանազան հանձնաժողովներ և խորհրդակցություններ՝ այս կամ այն հարցը լուծելու համար։ Հեռախոսի մոտ նստում էր մի քանի ժամ շարունակ, խոսելով Խարկովի, Պիտերի և այլ կենտրոնների ու ռազմաճակատների հետ[1]։ Այսպիսին է եղել Լենինի ամեն մի աշխատանքային օրը ամբողջ քաղաքացիական կռիվների տարիներին։ Եվ այդ ամենը տվեց իր համաշխարհային պատմական մեծագույն նշանակություն ունեցող արդյունքը։ Սովետական ժողովուրդը, Կոմունիստական պարտիայի և նրա մեծահանճար առաջնորդ Վ. Ի. Լենինի գլխավորությամբ, հաղթանակով դուրս գալով քաղաքացիական կռիվներից, ապահովեց մեր երկրի ազատությունն ու անկախությունը, ամրապնդեց աշխարհում հաղթանակած առաջին սոցիալիստական ռևոլյուցիայի նվաճումները և հնարավորություն տվեց ՍՍՌՄ ժողովուրդներին՝ ձեռնամուխ լինելու խաղաղ սոցիալիստական ստեղծագործ աշխատանքի։

---

[1] Տե՛ս «Ильич на стройке советского аппарата», Воспоминания, изд. «Старый Большевик», էջ 43—44։

ПАРТИЯ БОЛЬШЕВИКОВ ВО ГЛАВЕ С В. И. ЛЕНИНЫМ— ОРГАНИЗАТОР ПОБЕД В ГРАЖДАНСКОЙ ВОЙНЕ

З. Т. ГРИГОРЯН

(Резюме)

Вдохновителем и организатором гражданской войны 1918—1920 гг. был международный империализм во главе с империалистами Англии, Франции, США и Японии. Они вооружили и подняли против советской республики внутреннюю контрреволюцию, направили против Советской страны свои армии для удушения власти рабочих и крестьян. В. И. Ленин, анализируя весь ход гражданской войны, показал, что эту войну «нам Антанта навязала»[1].

Решающей силой, которая в огне и пламени гражданской войны разгромила внутреннего и внешнего врага и обеспечила свободу и независимость Советской страны, была Красная Армия, созданная партией большевиков, во главе с В. И. Лениным. Велика роль Ленина как в деле создания Красной Армии, так и в разработке вопросов советского военного искусства и его научного обоснования.

В деле победы советского народа в гражданской войне решающее значение имело мудрое руководство Центрального Комитета Коммунистической партии во главе с В. И. Лениным, который, учитывая внутреннее и международное положение страны, соотношение сил и классовой борьбы, вовремя предугадывал военно-политические и стратегические планы врага, точно определял направление его главного удара и в соответствии с этим мобилизовал и направлял все силы советского народа и Красной Армии на решающие фронта для разгрома врага.

В разгроме внутренней и внешней контрреволюции важное значение имела мудрая ленинская национальная политика партии большевиков, в результате которой все народы нашей страны тесно сплотились вокруг Коммунистической партии и по ее зову поднялись на защиту своей советской Родины. Как результат этой политики, в статье приводятся примеры боевого содружества между русским и армянским народами.

Таким образом, в годы гражданской войны ленинский Центральный Комитет был не только политическим, но и военным штабом нашей страны, и все славные победы советского народа, одержанные над внутренней и внешней контрреволюцией, непосредственно связаны с деятельностью партии большевиков и ее великого вождя В. И. Ленина.

---

[1] *В. И. Ленин,* соч., т. 30, стр. 416.